

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺՆԻ 2016-2020ԹԹ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ
ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԸՍՏ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԻ 2016-2020ԹԹ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Որակի ներքին ապահովման համակարգը Ինստիտուտում ներդրվել է 2010 թվականից: 2016 թվականին ՈԱԿ հիմնադրամի կողմից անցկացված արտաքին փորձաքննության արդյունքում ՀՖԿՍՊԻ-ն շնորհվել է ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարով: Փորձագիտական զեկույցում նշված խորհրդատվությունների հիման վրա մշակվել և Գիտխորհրդի կողմից հաստատվել է (24.11.2016թ.) թերությունների վերացման պլան-ժամանակացույցը, ձևավորվել են հանձնախմբեր՝ համապատասխան աշխատանքների իրականացման նպատակով:

ՀՖԿՍՊԻ-ի գործող ԶՌԾ-ի և թերությունների վերացման պլան-ժամանակացույցի համաձայն Որակի ապահովման բաժինը մշակել է իր 2016-2020թթ. Ռազմավարական զարգացման ծրագիրը, որը հաստատվել է 13.02.2017թ.:

23.11.2018թ. «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվել է ՀՖԿՍՊԻ-ի Որակի ներքին ապահովման համակարգի մշտադիտարկում, որի նպատակը հավատարմագրումից երկու տարի անց որակի ապահովման համակարգի առաջընթացի և ինստիտուցիոնալ հավատարմագրման արդյունքում մշակված և հաստատված «Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման բուհի ծրագրի» իրագործման միջանկյալ գնահատումն ու վերլուծությունն էր: Բուհը ներկայացրել է զեկույց՝ ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի իրականացման արդյունքների վերաբերյալ, ինչպես նաև ըստ օրակարգի անցկացվել են հանդիպումներ ղեկավարության, աշխատակիցների, ուսանողների հետ: Ըստ մշտադիտարկման արդյունքների եզրակացության՝ փորձագիտական զեկույցում նշված խնդիրները հիմնականում ընկալվել և կարևորվել են հաստատության կողմից: Վերլուծելով փորձագիտական զեկույցում վերհանված խնդիրների լուծման ուղղությամբ բուհի առաջընթացը, հետաձգված կամ չիրականացված քայլերը՝ թերությունների վերացման ծրագրի իրագործումը գնահատվել է ոչ ռիսկային. արձանագրվել է իրականացված բարելավումների արդյունավետությունը վերլուծելու անհրաժեշտությունը՝ ուսանողների կրթական ծրագրերում նշված վերջնարդյունքների ձեռքբերման տեսակետից:

ՈԱԲ-ն իր Ռազմավարական զարգացման ծրագրում, որը բխում է Ինստիտուտի ԶՌԾ-ից, որակի մշակույթի զարգացման նպատակով սահմանել է 8 գործողություն և դրանց իրականացման քայլերը, ժամկետները, վերջնարդյունքը և վերջնարդյունքի ցուցիչը: Անցած ժամանակահատվածում մի շարք գործողություններ իրականացվել են սահմանված ժամկետում, որոշ գործողություններ ընթացքի մեջ են կամ շարունակական բնույթ ունեն և, մի մասն էլ չի իրականացվել կամ թերի է իրականացվել:

Ըստ բաժնի ռազմավարական ծրագրի նախատեսված էր՝

1. Հստակեցնել ՈԱ բաժնի գործառույթները /տես ԶՌԾ, խնդիր 5.1/:

2016թ.-ին բուիը փոխելով իր կազմակերպարավական ձևը (ՊՈԱԿ-ից անցել է հիմնադրամի), և հաշվի առնելով Ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված խորհրդատվությունը, իրականացրել է կառուցվածքային փոփոխություններ: Այս նպատակով վերանայվել են ստորաբաժանումների կանոնադրությունները, այդ թվում՝ ՈԱԲ-ի կանոնադրությունը, որտեղ ներկայացվել է բաժնի կառուցվածքը, ամրագրվել են բաժնի խնդիրներն ու գործառույթները, աշխատակիցների իրավունքներն ու պարտականությունները: Մինչ ինստիտուցիոնալ հավատարմագրումը՝ ՈԱԲ-ի աշխատակիցների հավաքագրման գործընթացում մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ առկա չէին, աշխատակիցներն իրականացնում էին ՈԱ տիրույթից դուրս այլ գործառույթներ, ՈԱ գործընթացներում աշխատակիցների աշխատանքների հստակ բաշխում չկար: Բաժնի կազմում էին օպերատորը, թարգմանիչը և ծրագրավորողը, չնայած որակի ապահովման գործընթացների մասնագետ չէին: Նոր կանոնադրությամբ, նոր գործառույթներով ՈԱ բաժինը 2016 թվականից համակարգել, վերահսկել և խորհրդատվական աջակցություններ է տրամադրել ՈՆԱ գործընթացների մասին Ինստիտուտի բոլոր ստորաբաժանումներին, առավել ընդգրկուն աշխատանքներ է իրականացրել որակի ներքին ապահովման համակարգում:

Հաշվի առնելով բաժնի ընթացիկ գործունեությամբ պայմանավորված աշխատանքները, գործնականում իրականացվող գործառույթները՝ 2020թ. բաժնի ղեկավարի և 2 մասնագետների (մասնագետ և գլխավոր մասնագետ)՝ գործառույթները կրկին վերանայվել են: Հաշվի առնելով տարաբնույթ հարցումների անցկացման հետ կապված մի շարք խնդիրներ՝ հատկապես ժամանակային, Որակի ապահովման բաժինը 2020թ. հոկտեմբերին համալրվել է նաև սոցիոլոգի հաստիքով: Նշենք, որ սա Բաժնի ռազմավարական ծրագրով նախատեսված չէր և ապահովվել է 2020թ. Բաժնի կողմից վերհանված կարիքների հիման վրա:

ՈԱԲ-ը, ինչպես մյուս ստորաբաժանումները՝ որպես գործունեության կարճաժամկետ պլանավորում, յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին կազմում է իր գործունեության տարեկան աշխատանքային պլանը, որի համաձայն ներկայացվում է բաժնի տարեկան հաշվետվությունը **/տես ՁՌԾ խնդիր 5.1, գործ. 4/:**

Նշենք, որ ՈԱԲ-ի առաջարկությամբ և խորհրդատվություններով ստորաբաժանումները միասնականացված ձևաչափով մշակել են իրենց ստորաբաժանումների երկարաժամկետ և միջնաժամկետ ռազմավարական ծրագրերը՝ տեղայնացնելով Ինստիտուտի ռազմավարական ծրագրի նպատակները բոլոր ստորաբաժանումներում **/տես ՁՌԾ խնդիր 5.1, գործ. 3/:** Ստորաբաժանումների ռազմավարական ծրագրերի կապն աշխատանքային պլանի և տարեկան հաշվետվությունների հետ թույլ է արտահայտված:

Վերը նշված գործողության նախատեսված քայլերից էր՝ բոլոր ստորաբաժանումների որակի ապահովման գործառույթների վերանայումը, որի համար վերջնարդյունք են սահմանվել որակի ապահովման պատասխանատուների զեկույցներն ու արձանագրությունները: Ֆակուլտետի խորհրդի և ամբիոնների կողմից ներկայացված որակի

պատասխանատուների հետ ՈԱԲ-ը մշտապես համագործակցել է, սակայն նրանց գործառույթները հստակ չեն սահմանվել և իրենց կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ զեկույցներ, արձանագրություններ ոչ միշտ են կազմվել, փոխարենը ՈԱ պատասխանատուների հետ հանդիպումների, աշխատաժողովների վերաբերյալ որոշ արձանագրություններ, զեկույցներ կազմել է ՈԱԲ-ը:

ՈԱԲ-ի ռազմավարական ծրագրում նշված առաջին գործողությունն ու քայլերը հիմնականում իրականացվել են ժամկետներում՝ ապահովելով անհրաժեշտ վերջնարդյունք:

2.Մշակել ՀՖԿՍՊԻ-ի որակի ապահովման գործընթացների կառավարման համար տրամադրած մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների գնահատման հսկակ մեխանիզմներ /տես ՁՌԾ խնդիր 5.3, գործ. 5/:

Հստակեցնելով բաժնի գործառույթները, աշխատանքների ծավալը՝ Բաժնում դիտարկվող ժամանակահատվածում բավականաչափ աշխատանքներ են իրականացվել. այդ մասին են վկայում Բաժնի կողմից մշակված, լրամշակված փաստաթղթերը, ՈԱ գործընթացները կարգավորող ընթացակարգերը, միջազգային աշխատաժողովները, վերապատրաստումները, թեյնինգները, որոնք ներառված են Բաժնի տարեկան հաշվետվություններում, ինչպես նաև Ինստիտուտի տարեկան գործունեության հաշվետվություններում:

ՈԱ գործընթացներում կարևոր դերակատարություն ունի ՀՖԿՍՊԻ-ի ԳԽ-ն, որը հաստատում է ՈԱ ռազմավարությունը, քաղաքականությունը, քննարկում է ընթացիկ զեկույցները, տարեկան հաշվետվությունները և առաջարկվող բարելավումների միջոցառումները: Յուրաքանչյուր ուսումնական տարում Ինստիտուտում վերանայվում է ամբիոնների ՈԱ պատասխանատուների կազմը, որը ներառում է ներկայացուցիչներ բուհի պրոֆեսորադասախոսական, ուսանողական և վարչական կազմից և իր գործունեությունն իրականացնում է ՈԱԲ-ի ղեկավարի հանձնարարությամբ՝ նախապես հաստատված գործողությունների տարեկան աշխատանքային ծրագրերին համապատասխան: ՈԱ գործընթացների իրականացման նպատակով, ըստ անհրաժեշտության, ստեղծվել են աշխատանքային խմբեր, հատկապես՝ Ինստիտուցիոնալ թերությունների վերացման պլան-ժամանակացույցում նախատեսված խնդիրների լուծման նպատակով. 2016թ. ռեկտորի հրամանով ձևավորվել են մի քանի աշխատանքային խմբեր, հանձնախմբեր: Նշենք, որ աշխատանքային խմբերի կատարած աշխատանքները հիմնականում չեն ամրագրվել, դրանց ընթացքի, կատարման վերաբերյալ ժամանակացույց, արձանագրություններ, զեկույցներ աշխատանքային խմբերը չեն ներկայացրել, որն էլ հնարավորություն չի տվել գնահատելու ձևավորված աշխատանքային խմբերի աշխատանքների արդյունավետությունը: Սակայն ՈԱԲ-ի պետը պարբերաբար զեկույցել է Գիտխորհրդին և ներկայացրել Ինստիտուցիոնալ թերությունների վերացման նպատակով իրականացվող աշխատանքների ընթացքը:

Որակի ապահովման բաժնին ստեղծման պահից հատկացվել է աշխատասենյակ՝ համալրված անհրաժեշտ գույքով և նյութական ռեսուրսներով: Որակի

ապահովման գործընթացներում ֆինանսական ռեսուրսների բաշխումն իրականացվում է ըստ բուհի բյուջեի՝ աշխատավարձի և խրախուսման ձևերով, իսկ նյութական ռեսուրսների ձեռքբերումը կատարվում է բաժնի կողմից վերահանված կարիքների հիման վրա:

Նշենք, որ 2020թ. հունվարին ՈԱԲ-ի հաստիքացուցակը վերանայվել է և բարձրացվել են աշխատակիցների աշխատավարձերը:

Ինստիտուցիոնալ թերությունների վերացման պլան-ժամանակացույցում նշված խնդիրների լուծման, ինչպես նաև ՈԱ գործընթացներն արդյունավետ կազմակերպելու նպատակով բուհը կազմակերպել է վերապատրաստումներ, սեմինարներ՝ հատկացնելով անհրաժեշտ ֆինանսական միջոցներ: Վերապատրաստումներին մասնակցել են պրոֆեսորադասախոսական, վարչական կազմից ներկայացուցիչներ, այդ թվում ամբիոնների որակի պատասխանատուներ:

Վերոնշյալ խնդրով նախատեսված քայլերից էր՝ առաջավոր բուհերի փորձի ուսումնասիրության (2017-2018 ուստարում) հիման վրա լավ փորձի օրինակով ՈԱ գործընթացներին տրամադրվող ռեսուրսների գնահատման մեխանիզմների մշակումը, իսկ վերջնարդյունքի ցուցիչը պետք է լիներ ներքին շահակիցների բավարարվածության աստիճանը տրամադրվող ռեսուրսներից: Սակայն ուսումնասիրվել է ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած հայաստանյան մի քանի բուհերի փորձը՝ տրամադրվող մարդկային և ֆինանսական ռեսուրսների առումով: Կատարվել է համառոտ վերլուծություն՝ առկա ուսանողների, դասախոսների թվի, բյուջեի ծավալի պայմաններում այլ բուհերի կողմից տրամադրվող ռեսուրսների մասով, համադրվել է ՀՖԿՍՊԻ-ի կողմից տրամադրվող ռեսուրսների հետ: Տեղական այլ բուհերում ՈԱԲ-ի՝ որպես առանձին կառույցի ֆինանսավորում չի նախատեսվել: Սակայն 2017-2018թթ. ՀՖԿՍՊԻ-ի ՈԱԲ-ն ունեցել է առանձին բյուջե (տես 2018թ. զեկույց, հավելված 10.3):

Այնուամենայնիվ, ՈԱԲ-ը 2020-2021 ուստարում է նախատեսում իրականացնել Որակի ապահովման համակարգի բենչմարքինգ, լավ փորձի օրինակով մշակել ՈԱ գործընթացներին տրամադրվող ռեսուրսների գնահատման մեխանիզմներ, որոնք հնարավոր չի եղել իրականացնել սահմանված ժամկետներում՝ բաժնի աշխատակիցների ՈԱ տիրույթից դուրս խնդիրներով զբաղված լինելու պատճառով:

3. Ընդլայնել որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը և գնահատել արդյունավետությունը /տես ՁՌԾ խնդիր 5.3, գործ. 2/: Այս խնդրի համար վերջնարդյունք էր սահմանված շահակիցների մասնակցության արդյունավետության աճը:

Նախատեսված քայլերից էր առաջավոր բուհերի փորձի ուսումնասիրությունը 2016-2017 ուստարվա ընթացքում, որի համար գնահատման ցուցիչ էր սահմանված բենչմարքինգի հաշվետվությունը, սակայն նմանատիպ ուսումնասիրություն դեռ չի իրականացվել:

Դիտարկվող ժամանակահատվածում ինստիտուտում մշակվել և ներդրվել են մեխանիզմներ՝ ապահովելու ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը, ներգրավվածությունը ՈԱ գործընթացներում: Մշակվել է «Որակի ներքին ապահով-

ման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության քաղաքականությունը»: Վերանայվել են գրեթե բոլոր աշխատանքային խմբերի, հանձնաժողովների կազմերը, մշակվել են հարցումների անցկացման կարգեր¹, անցկացվել են հարցումներ, վերլուծություններ, գործատուների հետ աշխատաժողովներ և այլն: Արտաքին շահակիցներն ընդգրկվել են ՀՖԿՍՊԻ-ի 2016-2020թթ. ՁՌԾ-ի լրամշակման, ընթացակարգերի և կանոնակարգերի վերանայման գործընթացներում, սակայն գործուն մասնակցություն չեն ունեցել որակի ապահովման գործընթացներում: Այս առումով արտաքին շահակիցների ներգրավվածության նպատակով կիրառվող մեխանիզմներն ու մոտեցումներն անհրաժեշտ է կարգավորել և կատարելագործել:

ՈՆԱ գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության արդյունավետությունը գնահատելու համապատասխան քաղաքականություն կամ ընթացակարգ, ինչպես նախատեսված է Բաժնի ռազմավարական ծրագրում՝ որպես վերջնարդյունք (2016-2020 ուստարիներ), առայժմ բացակայում է: Որակի ապահովման գործընթացներում արտաքին շահակիցների ներգրավվածության արդյունավետությունը գնահատելու նպատակով 2019-2020 ուստարում ՈԱԲ-ը հավաքագրել և վերլուծել է՝

- ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունները և դրա հետ կապված բարելավումները,
- մասնագիտությունների կրթական ծրագրերի արտաքին փորձաքննության հիման վրա ներկայացված կարծիքները և դրա հետ կապված բարելավումները,
- Պրակտիկայի և կարիերայի բաժնի և արտաքին շահակիցների հետ համագործակցությունը:

Վերլուծության արդյունքները ներկայացվել են Գիտխորհրդի քննարկմանը:

4.Իրականացնել որակի ապահովման հաստատված քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետության գնահատում /տես ՁՌԾ խնդիր 1.4-ի գործողություն 1/:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական խմբի կողմից տրված խորհրդատվության համաձայն ՀՖԿՍՊԻ-ն վերանայել է որակի ներքին ապահովման քաղաքականությունը, որը հաստատվել է 30.05.2017-ին: Ըստ թերությունների վերացման պլան-ժամանակացույցի՝ որակի ապահովման հաստատված քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետության գնահատում նախատեսված էր իրականացնել 2016-2020 ուստարիների ընթացքում՝ ապահովելով հրապարակված ՈԱ քաղաքականություն և ընթացակարգեր, արդյունավետության գնահատման գործիքներ: Սակայն նշված ժամկետներում և ըստ սահմանված քայլերի հնարավոր չի եղել հասնել ակնկալվող վերջնարդյունքներին. նշված ժամանակահատվածում իրականացվել են ՈԱ գործընթացների ապահովմանն ուղղված այլ միջոցառումներ,

¹ Առկա ռեսուրսներից և ինստիտուտի կողմից առաջարկվող ծառայություններից ուսանողների բավարարվածության կարգ
Ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցման կարգ
Դասախոսների կարիքների գնահատման կարգ

օրինակ՝ վերանայվել, մշակվել են անհրաժեշտ փաստաթղթեր, կազմակերպվել վերապատրաստումներ: Այնուամենայնիվ, ՈԱ քաղաքականության արդյունավետության գնահատման քաղաքականություն չի մշակվել և չի ներդրվել, և ՈԱԲ-ը չունենալով կոնկրետ գործիքակազմ գնահատում իրականացնելու համար, 2018թ. օգտագործել է հիմնականում ՈԱ գործընթացները կանոնակարգող գործող փաստաթղթերը, հարցումների արդյունքները, բուհի գործունեության տարեկան հաշվետվությունները ՈՆԱ քաղաքականության գնահատում իրականացնելու նպատակով: Ըստ այդ վերլուծության՝ ՈՆԱ քաղաքականության այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են դասավանդման և ուսումնառության որակի ապահովումը (ՄԿԾ-ների արտաքին գնահատումը, ՄԿԾ-ների մշտադիտարկումը, ուսանողի գիտելիքների գնահատման մշտադիտարկումը), գիտահետազոտական գործունեության որակի ապահովումը, շրջանավարտների զբաղվածության, մասնագիտական հետագծի ուսումնասիրումը, ՊԴ կազմի կատարողականի մշտադիտարկումը, շահակիցների հետ հետադարձ կապի ապահովումը, աշխատաշուկայի ուսումնասիրումը, ՊԻԳԲ շրջափուլով չեն իրականացվել. որոշ գործընթացներ կամ չեն իրականացվել կամ իրականացվել են ոչ պարբերաբար և կանոնավոր բնույթ չեն կրել:

ՈՆԱ քաղաքականության բարելավման նպատակով 2019-2020 ուստարում իրականացվել են կառուցվածքային և բովանդակային փոփոխություններ, կազմակերպվել են մի շարք հարցումներ, ֆոկուս խմբային քննարկումներ, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվել է հարցմանը մասնակցած ներքին շահակիցներին: Հարցման, ֆոկուս խմբային քննարկման արդյունքներում ձևավորված առաջարկությունները հնարավորություն են ընձեռում համապատասխան ստորաբաժանումներին, պատասխանատու մարմիններին կազմել գործընթացների պարբերաբար վերանայման, մշտադիտարկման և զարգացման իրենց ծրագրերը: Այս գործիքների արդյունավետությունը դեռևս չի գնահատվել: Նշենք, որ հարցումների կազմակերպման, անցկացման, տվյալների հավաքագրման և մշակման մեթոդաբանությունը հստակ նկարագրված է հարցումների անցկացման համապատասխան կարգերում, որոնք տեղադրված են բուհի պաշտոնական կայքում:

5. Մշակել կրթության որակի ապահովմանն ուղղված կառուցվածքային և բովանդակային փոփոխությունների արդյունավետությունը գնահատող մեխանիզմներ /տես ՁՌԾ, խնդիր 5.3-ի գործ. 3 նույնը խնդիր 1.4 գործ. 7/:

Ըստ փորձագիտական զեկույցի՝ Ինստիտուտի ենթակառուցվածքների գործառույթները հստակեցված ու տարանջատված չէին, հասկանալի չէր նաև ֆակուլտետային կառուցվածքի տրամաբանությունը, ֆակուլտետներում ՄԿԾ-ների փոխկապակցվածությունը դժվար հասկանալի էր, որը բուհում կառուցվածքային փոփոխություններ իրականացնելու անհրաժեշտություն առաջացրեց: Այս խնդիրը ներառվեց բաժնի ռազմավարական զարգացման ծրագրում՝ սահմանելով համապատասխան վերջնարդյունքներ և վերջնարդյունքի ցուցիչներ (կառուցվածքային և բովանդակային փոփոխությունների արդյունավետության գնահատման

զեկույց, հաստատված գործիքներ, ընթացակարգ): Փոխությունների արդյունավետությունը հասկանալու համար հարկավոր էր ստորաբաժանումների և, ընդհանուր առմամբ, բուհի գործունեության արդյունավետության գնահատում իրականացնել: Սակայն, առանց վերոնշված փոփոխությունների արդյունավետության գնահատման, 2019-2020 ուստարվա սկզբին ռեկտորի պաշտոնակատարի առաջարկով Ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարները 2019 թվականի հոկտեմբերի 25-ի Գիտխորհրդի քննարկմանն են ներկայացրել իրենց կարծիքն ու առաջարկությունները նոր կազմակերպական կառուցվածքի վերաբերյալ: Այսօր բուհն իր գործունեությունն իրականացնում է 29.06.2020թ. Հոգաբարձուների խորհրդով հաստատված կառուցվածքի համաձայն:

2020թ. հաստատված նոր կառուցվածքով ևս Որակի ապահովման բաժինը շարունակում է մնալ որպես ինքնուրույն ստորաբաժանում՝ իր գործունեությամբ անմիջականորեն հաշվետու լինելով բուհի ռեկտորին: 2020թ. վերանայվել են բաժնի հաստիքներն ու գործառույթները: Նշենք, որ այն Բաժնի պլան-ժամանակացույցով նախատեսված չէր:

6. Սահմանել և կիրառել տեղեկատվության հավաքագրման մեխանիզմներ, որոնք կձևավորեն անհրաժեշտ հիմքեր որակի ապահովման ներքին և արտաքին գնահատումների համար /տես ԶՌԾ, խնդիր 1.4, գործ. 8 /:

Վերոնշված գործողությամբ սահմանված անհրաժեշտ քայլեր նշված ժամկետներում վերջնարդյունքների ապահովմամբ չեն իրականացվել: Ինստիտուտը փորձում է ինքնավերլուծության զեկույցի միջոցով ապահովել բավարար հիմքեր ինստիտուցիոնալ հավատարմագրման համար: ՈԱ բաժինը նախատեսել է իրականացնել ամբիոնների ներքին աուդիտ, ՈՆԱ համակարգի մշտադիտարկումներ, որոնք կընդգրկեն ՈԱԲ-ի 2020-2021 ուստարվա աշխատանքային պլանում: ՈԱ բաժնին տրամադրվում է ցանկացած տեղեկատվություն Ինստիտուտի գործունեության մասին, որը հնարավորություն է տալիս անհրաժեշտ վերլուծություններ իրականացնել:

7. Իրականացնել գործընթացների որակի վերաբերյալ տեղեկատվության տարածման համար կիրառվող մեխանիզմների արդյունավետության վերլուծություններ /տես ԶՌԾ, խնդիր 5.3, գործ. 4/:

Տեղեկատվության տարածման համար Ինստիտուտում կիրառվող մեխանիզմներից կարող ենք նշել ամբիոնի նիստերում քննարկումները, ֆակուլտետային խորհրդի նիստերը, հանձնաժողովների, աշխատանքային խմբերի, Ուսանողական խորհրդի, ՈւԳԸ-ի նիստերի արձանագրությունները, որոնք քննարկվել են ինստիտուտի գիտական խորհրդում: Արդյունքները կամ համապատասխան որոշումները, կատարված աշխատանքների մասին տեղեկատվությունը տեղադրվել են ինստիտուտի պաշտոնական կայքում, լուսաբանվել ֆեյսբուքյան էջում: Գիտական աշխատանքների, հետազոտությունների, թեզերի լուսաբանման համար ինստիտուտում տպագրվել է Ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության հիմնախնդիրները պաշտոնական միջազգային տեղեկագիրքը:

2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակում ՈԱԲ-ը պլանավորել է իրականացնել ՈԱ գործընթացներում շահակիցների տեղեկացվածության գնահատման վերլուծություն, որը կներկայացվի ԳԽ-ի քննարկմանը:

Չնայած Որակի ապահովման բաժնի ռազմավարական զարգացման ծրագրում տեղ չեն գտել ՀՖԿՍՊԻ-ի 2016-2020 թթ. ԶՌԾ-ի նպատակներից բխող այլ խնդիրներ ու գործողություններ, սակայն ՈԱԲ-ը նախաձեռնել է քայլեր այդ խնդիրների իրականացման համար, որոնք տեղ են գտել բաժնի տարեկան աշխատանքային պլաններում: ՈԱԲ-ի նախաձեռնությամբ դիտարկվող ժամանակահատվածում իրականացվել են այլ աշխատանքներ ևս:

Այսպես, համաձայն խնդիր 1.1-ի՝ այն է՝ «Իրականացնել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթական ծրագրերի վերափոխումներ».

■ Մշակվել է ՀՖԿՍՊԻ-ի Մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և հաստատման կարգը (28.12.2017թ.) /**տես ԶՌԾ խնդիր 1.1, գործ. 2/:**

■ Մասնագիտությունների կրթական ծրագրերի արտաքին գնահատման ընթացակարգը(24.02.2020թ.)

Որակի ապահովման պատասխանատուներից ձևավորված աշխատանքային խմբերի կողմից հստակեցվել և վերանայվել են բակալավրի կրթական ծրագրի «Մասնագիտական մանկավարժություն», «Սպորտ», «Մարզական լրագրություն» մասնագիտությունների կրթական վերջնարդյունքները (30.05.2018թ.) /**տես ԶՌԾ խնդիր 1.1, գործ. 2/:** Հիմք են ընդունվել Որակավորումների ազգային շրջանակի բնութագրիչները և Բլումի տաքսոնոմիան: Իրականացվել է բենչմարքինգ բակալավրի Սպորտ մասնագիտության շրջանակում:

Ըստ վերամշակված վերջնարդյունքների և վերանայված ուսումնական պլանների՝ կազմվել են առարկայական ծրագրերը՝ ապահովելով ՄԿԾ-ների և առարկայական ծրագրերի վերջնարդյունքների համապատասխանությունը: Առարկայական ծրագրերում ավելացել է քարտեզագրումը՝ ապահովելով դասավանդման և ուսումնառության մեթոդների կապը վերջնարդյունքների և գնահատման մեթոդների հետ /**տես ԶՌԾ խնդիր 1.1, գործ. 2/:**

Վերոնշյալ աշխատանքների արդյունավետ իրականացման նպատակով իրականացվել են վերապատրաստումներ, աշխատաժողովներ.

- Միջազգային աշխատաժողով «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում մասնագիտական կրթության արդիականացում և բարելավում» ծրագրի շրջանակում:
- «Որակի ապահովման ներբուհական համակարգի հիմնախնդիրները և մարտահրավերները» խորագրով միջազգային աշխատաժողով:

2020թ. ՄԿԾ-ների արտաքին փորձաքննության հիման վրա վերանայվել են բակալավրի և մագիստրատուրայի գրեթե բոլոր մասնագիտությունների կրթական ծրագրերը: Մասնավորապես՝ վերանայվել են կրթական ծրագրերի

վերջնարդյունքները, ուսումնական պլանները, առարկայական նկարագրերը և որոշ դասընթացների ծրագրեր: Լրամշակվել է նաև պրակտիկայի ծրագրի ձևաչափը:

Առարկայական նկարագրի նոր ձևաչափը (հաստատված Գիտխորհրդի թիվ 18 նիստով, 31.08.2020թ.) հնարավորություն է ընձեռում դասավանդման և ուսումնառության մեթոդները կապակցել ուսումնառության վերջնարդյունքների և գնահատման մեթոդների հետ, սահմանել յուրաքանչյուր առարկայի գնահատման չափանիշները:

Աշխատանքներ են տարվում ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներով համալրման ուղղությամբ (գրադարանային ֆոնդ, ինտերակտիվ լսարաններ, նորագույն տեխնոլոգիաներ և այլն):

Ըստ խնդիր 6.3-ի գործողություն 1-ի անհրաժեշտ է՝ «Գնահատել կրթական ռեսուրսների արդյունավետությունը, կիրառելիությունը և հասանելիությունը գնահատող գործիքների արդյունավետությունը»: Այս գործողությունը բխում է հետևյալ խնդրից՝ «Ապահովել ինստիտուտի ֆինանսական ռեսուրսների կառավարման և դրանց օգտագործման արդյունավետությունը»:

Ուսանողներին տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների օգտակարության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներն են դասավանդողների, շրջանավարտների և ուսանողների ռեսուրսներից բավարարվածության վերաբերյալ անցկացվող հարցումները, կազմակերպվող քննարկումներն ու հանդիպումները: Ինստիտուտը պարբերաբար իրականացրել է դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման գործընթացներ, սակայն արդյունավետության գնահատումներ չեն իրականացվել: ՈԱԲ-ի կողմից 2019-2020 թթ. անցկացված հարցումների վերլուծությունները, ինչպես նաև արդյունքների հիման վրա համապատասխան ստորաբաժանումների կողմից պլանավորած և իրականացված բարելավումները գնահատելու համար նույնպես նախատեսվում են հարցումներ, ֆոկուս խմբային քննարկումներ, շրջայցեր և այլն:

Հաշվետու ժամանակահատվածում վերանայվել և լրամշակվել են մի շարք փաստաթղթեր՝ հիմք ունենալով փորձագիտական խմբի խորհրդատվությունը: Բոլոր փաստաթղթերը քննարկվել են ստորաբաժանումների ներկայացուցիչների շրջանում:

1. ՈԱ բաժնի կանոնադրությունը /31.10.2016թ./
2. ՀՖԿՍՊԻ-ի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը /25.01.2017թ./
3. Ուսանողի ուղեցույց/2017թ.
4. ՀՖԿՍՊԻ-ի որակի ներքին ապահովման քաղաքականությունը /30. 05. 2017թ./
5. ՀՖԿՍՊԻ-ի վարչական, պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմերի աշխատողների աշխատանքային գործունեության գնահատման և խրախուսման կարգ /28.12.2017թ./
6. ՀՖԿՍՊԻ-ի ՊԴ կազմի վերապատրաստման ընթացակարգ /22.06.2017թ./
7. Ինստիտուտի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության համար կիրառվող գործիքներ և մեխանիզմներ /30.01.2019թ./

8. Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգը /30.01.2019թ./
9. ՊԴ կազմի ձևավորման կանոնակարգ /30.01.2019թ./
10. ՀՖԿՍՊԻ-ի ՄԿԾ-ների համեմատական վերլուծության (բենչմարքինգի) քաղաքականություն և ընթացակարգեր /30.01.2019թ./
11. Մագիստրատուրայի մասնագիտության կրթական ծրագրերը /12.03.2020թ./
12. ՀՖԿՍՊԻ-ի կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցը /17.02.2017թ./
13. ՀՖԿՍՊԻ-ի խորհրդատուների գործունեության կանոնակարգ /01.09.2017թ./
14. ՀՖԿՍՊԻ-ի ուսանողական խորհրդի կանոնադրություն/06.12.2019թ./
15. Դասալսումների կազմակերպման, անցկացման և գնահատման կանոնակարգ /12.03.2020թ./

Մշակվել են՝

1. Ամբիոնների Ռազմավարական զարգացման ծրագրերը՝ ըստ բուհի Ռազմավարական ծրագրի /2017թ. 2-րդ կիսամյակ/
2. ՀՖԿՍՊԻ-ի ՄԿԾ-ների մշակման և հաստատման կարգ /28.12.2017/
3. ՀՖԿՍՊԻ-ի ակադեմիական ազնվության կանոնակարգը /17.02.2017թ./
4. ՀՖԿՍՊԻ-ի բակալավրիատի ուսանողի ուղեցույցը /17.02.2017թ./
5. ՀՖԿՍՊԻ-ի խորհրդատուների գործունեության կանոնակարգ /01.09.2017թ./
6. Հարցումների անցկացման կարգերը /17.09.2018թ./
7. ՀՖԿՍՊԻ-ի գիտահետազոտական գործունեության քաղաքականություն /27.03.2019թ./
8. Որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության քաղաքականություն /30.01.2019/
9. ՀՖԿՍՊԻ-ի միջազգայնացման քաղաքականություն/27.03.2019թ./
10. ՀՖԿՍՊԻ-ի պրակտիկաների կազմակերպման կանոնակարգ/28.08.2019թ./
11. ՈԱ աշխատակիցների համար մշակվել են պաշտոնի հրահանգներ /գործառույթներ
12. Մասնագիտությունների կրթական ծրագրերի արտաքին գնահատման ընթացակարգը/24.02.2020թ.

Վերանայված փաստաթղթերում կատարված փոփոխությունների, լրացումների հետ կապված արձանագրություններ չեն կազմվել: Սակայն պետք է նշել, որ բոլոր փաստաթղթերի նախագծերը քննարկվել են բուհի ներքին շահակիցների շրջանում, այնուհետև նոր հաստատվել Գիտխորհրդի նիստում:

Այսպիսով, Որակի ապահովման բաժինն առաջնորդվելով բուհի Զարգացման ռազմավարական ծրագրով՝ իրականացրել է պլանով նախատեսված աշխատանքների զգալի մասը: Կան գործողություններ, որոնք չեն իրականացվել սահմանված ժամկետներում կամ իրականացվել են մասամբ. աշխատանքների արդյունավետությանը խոչընդոտող գործոնները չեն վերհանվել: Հավանական պատճառներ

կարող էին լինել՝ անձնակազմի ներուժը խնդիրների իրականացման գործում, ձևավորված աշխատանքային խմբերի անդամների ծանրաբեռնվածությունը, թույլ մոտիվացիան, բուռն աշխատակիցների աշխատանքային ժամերի անվերահսկելիությունը, ոչ կանոնավոր հանդիպումները, պարտականությունների ոչ համաչափ բաշխումն ու վերահսկողությունը:

- Լավ փորձի օրինակով մշակել որակի ապահովման գործընթացներին տրամադրվող ռեսուրսների գնահատման մեխանիզմներ
- Ուսումնասիրել որակի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի գնահատման առաջավոր բուհերի փորձը
- Մշակել կրթության որակի ապահովմանն ուղղված բովանդակային փոփոխությունների արդյունավետության գնահատման գործիքներ և գործարկել
- Շահակիցների կարծիքների հիման վրա բարելավել գործընթացների որակի վերաբերյալ տեղեկատվության տարածման մեխանիզմները

Բաժնի աշխատակիցների կողմից արվել է հետևյալ եզրակացությունը՝

1. Իրականացնել բաժնի գործունեության արդյունավետությանը խոչընդոտող գործոնների վերլուծություն:
2. Չիրականացված կամ մասամբ իրականացված գործողությունները դարձնել առաջնահերթություններ/խնդիրներ ՈԱ բաժնի Ռազմավարական զարգացման երկարաժամկետ պլանը մշակելիս:
3. Սահմանել իրատեսական ժամկետներ և չափելի ցուցիչներ նպատակից բխող յուրաքանչյուր խնդրի իրագործման համար:

SWOT վերլուծություն

Ըստ Որակի ապահովման բաժնի զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. Որակի ապահովման հստակ ռազմավարություն: 2. Գործող Որակի ապահովման բաժին: 3. ՈԱԲ-ի աշխատակիցների վերանայված գործառույթներ: 4. Որակի ապահովման համար վերանայված և մշակված փաստաթղթային բազա: 5. Որակի ապահովման գործընթացի բարելավման նպատակով պարբերաբար իրականացվող վերապատրաստումներ, աշխատաժողովներ: 6. Ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմների, գործիքների առկայություն: 7. ՈՆԱ գործընթացների պարբերաբար	1. ՈԱ բաժնի, ինչպես նաև մյուս կառուցվածքային ստորաբաժանումների Ռազմավարական զարգացման ծրագրերի փոխկապակցվածությունը կարճաժամկետ պլանավորման և հաշվետվությունների հետ: 2. Ռազմավարական զարգացման ծրագրի խնդիրների, գործողությունների կատարման համար սահմանված ոչ իրատեսական ժամկետները: 3. Ըստ անհրաժեշտության ձևավորված աշխատանքային խմբերի և հանձնախմբերի կատարողականների գնահատման բացակայությունը: 4. Շահակիցներին տրամադրվող հաշվետ-

մշտադիտարկումը և խնդիրների վերհանումը:	վոլականության ընձեռած հնարավորությունը՝ ուժեղ և թույլ կողմերի վերհանման և իրավիճակի բարելավմանն ուղղված միջոցառումների մշակման նպատակով:
Հնարավորություններ	Ռիսկեր
<p>1. Որակի ապահովման լավագույն փորձի ներդրում:</p> <p>2. Որակի ներքին ապահովման համակարգի բենչմարքինգ առաջատար բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ:</p> <p>2. Անձնակազմի վերլուծական կարողությունների հզորացում:</p> <p>3. Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ արագ և հասանելի հաշվետվողականության ապահովում հասարակության առավել լայն շրջանակներին:</p> <p>4. Արտաքին շահակիցների /շրջանավարտների, հիմնական գործատուների մասնակցության ընդլայնում բուհի որակի ապահովման գործընթացներում:</p> <p>5. Միջազգային դրամաշնորհային ծրագրերի հնարավորությունների օգտագործում՝ կրթական գործընթացների արդիականացման նպատակով:</p>	<p>1. Իրականացված բարելավումների արդյունավետության վերլուծությունների բացակայությունը (կրթական ծրագրերում նշված վերջնարդյունքների ձեռքբերման տեսակետից):</p> <p>2. Պլանավորված գործողությունների իրականացմանը, հետաձգմանը խոչընդոտող գործոնների վերլուծությունների բացակայությունը:</p>

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները

1. Որակի ներքին ապահովման համակարգի բենչմարքինգ:
2. Որակի ապահովման գործընթացներում շահակիցների մասնակցությունն ապահովող արդյունավետ մեխանիզմների մշակում և կիրառում:
3. Ինստիտուտի գործունեության վրա ազդող արտաքին և ներքին գործոնների ուսումնասիրության չափելի գործիքների կիրառում: